



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ  
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1  
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06  
Էլ. փոստ [gyumri@gyumri.am](mailto:gyumri@gyumri.am)

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**«17» հուլիսի 2015 թվական N 100-Ա**

**ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ «ԱՐՄԻՆԵ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ  
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հաշմանդամություն ունեցող անձանց «Արմինե» կրթամշակութային հասարակական կազմակերպության գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի հունիսի 15-ին N7080 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց «Արմինե» կրթամշակութային հասարակական կազմակերպության կամավորների նախաձեռնությամբ բակային ճամբարի կազմակերպման և թվով 100 (մեկ հարյուր) հաշմանդամություն ունեցող և ոչ հաշմանդամ երեխաների ամառային հանգիստը բակային ճամբարում լավագույնս կազմակերպելու նպատակով որպես նվիրատվություն հատկացնել 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

**Կողմ (14)**

**Դեմ (0)**

**Ձեռնպահ(0)**

- Ա. Աղամյան
- Գ. Աղամյան
- Ա. Բաղեյան
- Ա. Բաղդամյան
- Մ. Գաբոյան
- Ա. Գրիգորյան
- Վ. Եղիզարյան
- Հ. Խաչատրյան
- Հ. Կարապետյան
- Տ. Հովհաննիսյան
- Վ. Հունանյան
- Ն. Մեսրոպյան
- Ռ. Մխիթարյան
- Մ. Սահակյան

**ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն**

**Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ**